

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑՆԵՐԸ ՍՄԿԿ
XXVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՑՍԻ ՏԱԿ

2. ԶԱՔԱՐՅԱՆ

Զարգացած սոցիալիստական հասարակարգի ներկա փուլում, երբ զգալիորեն աճել են տնտեսական զարգացման ինտենսիվ գործոնները, աշխատանքային ռեսուրսների ձեռավորմանը, բաշխմանն ու օգտագործմանը ներկայացվում են նոր, ավելի բարձր պահանջներ: ՍՄԿԿ XXVI համագումարը խնդիր դրեց բարելավելու աշխատանքային ռեսուրսների օգտագործումը, նշեց այդ պրոբլեմի լուծման կոնկրետ ուղիները: ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման հիմնական ուղղություններում նշված են բնական, նյութական և աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումն ապահովելու, եղած և նոր ստեղծվող աշխատատեղերը աշխատանքային ռեսուրսների հետ հաշվեկշռելու անհրաժեշտությունը:

Իրականացնելով աշխատանքային ռեսուրսների օգտագործման գիտականորեն հիմնավորված քաղաքականությունը, սոցիալիստական պետությունը միաժամանակ վճռում է սոցիալ-տնտեսական կարևորագույն խնդիրներ՝ ուղղված նյութական բարիքների ստեղծման նպատակով բնության դեմ մղվող պայքարում բնակչության կարողությունների ավելացմանը, բնակչության պահանջմունքները աշխատանքով բավարարելուն և ժողովրդի նյութական բարեկեցության բարձրացման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

Տնտեսության պլանային սոցիալիստական սիստեմը թույլ է տվել ապահովելու աշխատունակ բնակչության համընդհանուր զբաղվածությունը, որակավորված կադրերով բավարարելու ժողովրդական տնտեսության պահանջմունքները, անշեղորեն բարձրացնելու աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Սոցիալիզմի ժամանակ համընդհանուր զբաղվածությունը նշանակում է, որ բոլոր աշխատանքային ռեսուրսները ներառված են հասարակության հավաքական աշխատողի մեջ և միացված են իրային գործոններին՝ աշխատանքին մասնակցելու համար: Սոցիալիզմի պայմաններում օբյեկտիվորեն անհրաժեշտ ու հնարավոր է և գործնականորեն իրագործելի համընդհանուր զբաղվածություն նրանց համար, ովքեր պարտավոր են կամ ցանկանում են աշխատել¹:

Համընդհանուր զբաղվածությունը ամենևին չի նշանակում աշխատանքային ռեսուրսների հարյուր տոկոսանոց մասնակցություն միայն հանրային տրտեսության մեջ: Անձնական, օժանդակ և տնային տնտեսությունը նույնպես

¹ Այսպես՝ կենսաթոշակային տարիքի անձինք պարտավոր չեն աշխատել, բայց իրենց ցանկությունը նրանց հնարավորություն է տրվում աշխատանքային գործունեությունը շարունակել:

սոցիալիզմին ներհատուկ ձև է, դրա համար սոցիալիզմի ժամանակ համընդհանուր զբաղվածությունը նշանակում է բոլոր աշխատանքային ռեսուրսների աշխատանքի ներգրավում անկախ այն բանից՝ հանրային թե անձնական տրնտեսությունում են զբաղված նրանք, չնայած համընդհանուր զբաղվածության գլխավոր էությունը զբաղվածությունն է հանրային տնտեսության մեջ, որի դերը և նշանակությունը անշեղորեն բարձրանում է:

Կոմունիստական շինարարության պրակտիկան, գիտատեխնիկական առաջադիմությունը, ժողովրդական տնտեսության կառուցվածքի բարդացումը այսօր նոր պրոբլեմներ են դնում նաև աշխատանքային ռեսուրսների օգտագործման ռացիոնալացման բնագավառում: Մեզանում զբաղվածության պրոբլեմը ժողովրդական տնտեսության պահանջներին համապատասխան ռացիոնալ զբաղվածության ապահովման պրոբլեմ է, աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման պրոբլեմ: Դրա հետ կապված, բնականաբար, առանձնակի կարևորություն են ստանում նաև տեխնիկական առաջադիմության հետևանքով ազատվող աշխատուժի վերաորակավորումը և հասարակական արտադրության մնացած տեղամասերում նրա աշխատանքի տեղավորումը, երկրի տնտեսական շրջանների և ժողովրդական տնտեսության ճյուղերի միջև աշխատանքային ռեսուրսների վերաբաշխումը, տնային և անձնական օժանդակ տնտեսությունից աշխատանքային ռեսուրսների ազատումը և այլն: Սոցիալիստական պետությունն ակտիվորեն ներգործում է զբաղվածության վրա այն հաշվով, որպեսզի նրա փոփոխությունները առավել մեծ շահով նպաստեն հանրային արտադրության արդյունավետության բարձրացմանը և այդ հիման վրա բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, անհատի համակողմանի զարգացմանը:

Սոցիալիզմի պայմաններում բնակչության զբաղվածությունը ներհատուկ է աշխատանքային ռեսուրսների ձևավորման և օգտագործման պլանաչափությունը, որն արտահայտվում է գործազրկությունը բացառող մշտական պայմանների ստեղծման մեջ:

Հարկ է նկատել, որ կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանում մեր երկրում, այդ թվում նաև Հայաստանում գոյություն ունեցող գործազրկություն: Դեռևս շարունակում էին գոյություն ունենալ ագրարային գերբնակչության արմատները, իսկ գյուղացիության տարերային և անկազմակերպ հոսքը գյուղից դեպի քաղաք ավելի էր մեծացնում գործազուրկների թիվը: Երկրի սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման ընթացքում գործազրկությունը վերացվեց: Հետագա տարիներին զբաղվածությունը ինչպես ՍՄՀՄ-ում, այնպես էլ Հայաստանում էական փոփոխություններ կրեց: Աշխատունակ տարիքի բնակչության զբաղվածությունը հանրային տնտեսության և արտադրությունից կտրված ուսման մեջ 1979 թ. մարդահամարի տրվյալներով կազմեց ամբողջ աշխատունակ բնակչության ավելի քան 94 տոկոսը 1959 թ. 78 տոկոսի փոխարեն: Տնային և անձնական օժանդակ տնտեսության մեջ զբաղվածների տեսակարար կշիռը այդ ժամանակամիջոցում զգալիորեն կրճատվեց: Ըստ որում անհրաժեշտ է ընդգծել, որ Հայաստանի աշխատանքային ռեսուրսների աճի բարձր տեմպերը հետևանք են ոչ միայն բնական աճի, այլ նաև մեխանիկական շարժի: Աշխատանքային ռեսուրսների ձևավորման առանձնահատկություններից մեկն այն է, որ բնակչության մեխանիկական աճը տեղի է ունենում ինչպես միջհանրապետական միգրացիայի, այնպես էլ հայրենադարձության միջոցով: Մեր հանրապետության համար հատկանշական է

նակ աշխատանքային ռեսուրսների արագատեմպ աճը, որը ժողովրդական տնտեսության հետագա արագ զարգացման կարևորագույն պայմաններից մեկն է և հսկայական դեր է խաղում նակ երկրի տնտեսական պոտենցիալի ամրապնդման գործում:

ՄՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի «Պլանավորումը բարելավելու և արտադրության արդյունավետության ու աշխատանքի որակի բարձրացման վրա տնտեսական մեխանիզմի ներգործությունն ուժեղացնելու մասին» որոշումով ավելի է բարձրացվում աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման դերը էկոնոմիկայի առջև ծառայած խնդիրների լուծման գործում:

Աշխատանքային ռեսուրսները պլանաչափ բաշխելու և դրանց օգտագործման արդյունավետության նկատմամբ վերահսկողություն ապահովելու համար սահմանվել է աշխատողների թվաքանակի լիմիտ, ինչպես նաև՝ աշխատանքների ընդհանուր ծավալում ձեռքի աշխատանքի բաժինը կրճատելու առաջադրանք: Այս միջոցառումները էապես բարձրացրել են աշխատանքային ռեսուրսների հաշվեկշիռի և ժողովրդական տնտեսության ճյուղերն աշխատուժով ապահովելու պլանների կարգավորիչ դերը, թույլ են տվել վերացնելու աշխատուժի արհեստական պակասը, նպաստելու արտադրության համալիր մեքենայացմանն ու ավտոմատացմանը, ձեռքի աշխատանքներում դրադված բանվորների ազատմանը և բարձր որակավորում պահանջող տեղամասեր ներանց անցմանը:

Տնտեսական մեխանիզմի կատարելագործումը, աշխատանքի արտադրողականության բարձրացման ռեզերվների բացահայտման նյութական շահագրգռվածության ապահովումը կուժեղացնեն աշխատուժի խնայողական օգտագործումը, իրական հնարավորություններ կբացեն աշխատուժի ազատման օրենքի գործողության համար:

Աշխատանքային ռեսուրսների զբաղվածության բարձրացումը և նրանց ռացիոնալ օգտագործումը անրաժանելի են միմյանցից, քանի որ բնակչության զբաղվածության աստիճանի բարձրացումը ենթադրում է նակ նրա ռացիոնալ օգտագործում: Աշխատունակ բնակչությունը պետք է ոչ միայն զբաղված լինի հանրային տնտեսության մեջ, այլև աշխատանքի նվազագույն ծախսումներով հասարակությանը տա տնտեսական մեծ արդյունք:

Սոցիալիստական հասարակարգը ստեղծել է աշխատունակ բնակչության համընդհանուր զբաղվածության ապահովման բոլոր անհրաժեշտ նախադրյալներն ու պայմանները: ՄՄԿԿ XXVI համագումարում մեկ անգամ ևս ընդգծվեց, որ աշխատանքային ռեսուրսների համալրման հիմնական աղբյուրը ներկայումս աշխատունակ տարիքի բնակչության բնական աճն է, որը, սակայն, նույնպես սահմանափակ է այն խմբատով, որ զբաղվածության բարձր մակարդակի պայմաններում աշխատողների թվաքանակի ավելացման հիման վրա արտադրության արագ ընդլայնման հնարավորությունները մեծ չեն լինի: Բացի այդ, չպետք է մոռանալ, որ ընթացիկ XI հնգամյակում շատ աշխատողներ պետք է աշխատանքի անցնեն բնակչության կուլտուր-կենցաղային սպասարկման ոլորտում: Դրա համար կուսակցությունն այսօր առաջնահերթ խնդիր է համարում աշխատանքի արտադրողականության ըստ ամենայնի բարձրացումը և եղած աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը հասարակական արտադրության երկու ոլորտներում: «80-ական թվականներին, — նշեց Լ. Ի. Բրեժնևը, — ինչպես դուք գիտեք կգործեն տնտեսական զար-

գացումը բարդացնող մի շարք գործոններ: Դրանցից մեկը աշխատանքային ռեսուրսների աճի կրճատումն է»²:

Ի դեպ, անցած տասնամյակում (1971—1980) երկրի ժողովրդական տնտեսության մեջ դեռևս զգացվում էր աշխատուժի պակաս: Արդյունավետ միջոցներ չձեռնարկելու դեպքում դա կարող է տեղի ունենալ և հետագա տարիներին: Զպետք է մոռանալ, որ ներկայումս փոքր ինչ կրճատվել է գյուղական բնակիչների հոսքը դեպի քաղաք, ինչպես նաև անձնական օժանդակ տնտեսություններում զբաղվածների թվաքանակը: Զգալիորեն ավելացել է նաև սովորողների թվաքանակը բուհերում, տեխնիկումներում և հանրակրթական դպրոցներում: Սակայն աշխատուժի անբավարարության գլխավոր պատճառը, անշուշտ, հանրային տնտեսության մեջ զբաղվածների ոչ ռացիոնալ օգտագործումն է: Զարգացման ներկա փուլում նյութական և ոչ նյութական արտադրության ոլորտներում աշխատանքային ռեսուրսների օգտագործման և բաշխման անհրաժեշտ համամասնությունների ապահովումը առանձնակի կարևորություն ունի: «Երկիրն այնքան ավելի հարուստ է,— գրում է Կ. Մարքսը,— որքան արդյունքների միևնույն քանակի դեպքում արտադրող բնակչությունը ավելի քիչ է ոչ արտադրող բնակչության նկատմամբ: Չէ՞ որ արտադրող բնակչության հարաբերական սակավաթվությունը աշխատանքի արտադրողականության հարաբերական բարձրության մեկ ուրիշ արտահայտությունը միայն կլինեք»³: Ոչ նյութական արտադրության ոլորտում աշխատողների թրվաքանակի ամեն մի աճ պետք է ապահովվի նյութական արտադրության ճյուղերում զբաղվածների աշխատանքի արտադրողականության առաջանցիկ աճով: Դա թույլ կտա կարգավորել աշխատանքային ռեսուրսների բաշխումը նյութական և ոչ նյութական արտադրության ոլորտների միջև:

Նյութական արտադրության արդյունավետության բարձրացման հետ չհամաձայնեցված ոչ նյութական արտադրության ոլորտի ընդլայնումը կարող է հանգեցնել ժողովրդական տնտեսության մեջ զբաղվածների թվաքանակից նյութական բարիքների աճի ետ մնալուն: Մյուս կողմից, նյութական արտադրության ոլորտի միակողմանի ընդլայնումն էլ կխոչընդոտեր մշակույթի, կրթության, բժշկության զարգացմանը, որն էլ իր հերթին բացասական ներգործություն կունենար նյութական արտադրության ոլորտի վիճակի վրա: Նյութական արտադրության ոլորտում զբաղվածների թվի հարաբերական կրճատման պայմաններում նրա ներսում աճում է բանվոր ծառայողների թվաքանակը ինֆրակառուցվածքի կարևորագույն ճյուղերում (տրանսպորտ, կապ, շինարարություն) (1965 թ.՝ 21,7, 1975 թ.՝ 25,7 և 1980 թ.՝ 26,8 տոկոս)⁴:

Սոցիալիստական շինարարության բոլոր փուլերում աշխատանքային ռեսուրսների վերաբաշխումը նշված ոլորտներում կատարվել է պլանաչափորեն՝ ելնելով ինչպես մեր երկրի արտադրողական ուժերի զարգացման վիճակից, այնպես էլ նյութական արտադրության ոլորտում աշխատանքի արտադրողականության ձեռք բերած մակարդակից: Դրա շնորհիվ մի կողմից ապահովվել է աշխատուժի ռացիոնալ վերաբաշխումը նյութական արտադրության ճյուղերի միջև, իսկ մյուս կողմից հնարավորություն է ստեղծվել ապահովելու դրա

² Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը ՍՄԿԿ XXVI համագումարին և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում, Եր., 1981, էջ 61:

³ К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 26, ч. I, с. 215.

⁴ Հաշվարկված է «СССР в цифрах в 1980 г.» գրքում, էջ 160—161:

արդյունավետ վերաբաշխումը նաև ոչ նյութական արտադրության ոլորտի ճյուղերի միջև: Այստեղ զբաղվածների թվաքանակի առավել արագ աճի այս միտումը պահպանվելու է նաև հետագա տարիներին: ՍՍՀՄ-ում հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացման չափով տեղի է ունենում զբաղվածների թվաքանակի կրճատում նյութական արտադրության ճյուղերում: Այսպես, եթե 1913 թ. այդ ոլորտում զբաղված էր ամբողջ աշխատունակ բնակչության 95 տոկոսը, ապա 1970 թ.⁵ 77,1, իսկ 1980 թ.⁶ 73,9 տոկոսը: Համապատասխանաբար ոչ նյութական արտադրության ոլորտի ճյուղերում զբաղվածների թիվը կազմել է 1913 թ. 5 տոկոս, 1950 թ.⁵ 13,8 և 1980 թ.⁶ 26,1 տոկոս⁵: Կուսակցության հռչակած արտադրության ինտենսիվացման կուրսի իրականացման հետևանքով աշխատանքային ռեսուրսների օգտագործման մեջ տեղի են ունենում դրական փոփոխություններ: Նախ և առաջ նկատվում է հանրային տնտեսության մեջ զբաղվածների թվաքանակի աճի կրճատման կայուն միտում: Բայց դրա հետ մեկտեղ ներկայումս ավելացել է հասարակական արդյունքի և ազգային եկամտի ծավալը, որը վկայում է աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման մասին: Հատկանշական է, որ վերջին տարիներին աշխատանքի արտադրողականության աճի հիման վրա արտադրության մասշտաբների ավելացումը հատկապես նկատելի է:

Ինչ վերաբերում է արդյունաբերության ճյուղին, ապա անցած տարիներին նկատվում էր այդ ճյուղում զբաղվածների իջեցման միտում երկրի զբաղված բնակչության ընդհանուր թվի մեջ: Այսպես, եթե 1940 թ. արդյունաբերության մեջ հաշվվում էր բոլոր աշխատողների 20 տոկոսը, ապա 1970 թ.⁶ 29,6, 1975 թ.⁶ 29, և 1979 թ.⁶ 29,3 տոկոսը⁶: Արդյունաբերության ճյուղում նման միտումը երկրի աշխատանքային ռեսուրսների օգտագործման մեջ եղած առավել կարեւոր փոփոխություններից է: Այդ ճյուղը, հավանաբար, հետագայում գյուղատնտեսության ճյուղի նման ժողովրդական տնտեսության այլ ճյուղերի և հատկապես ծառայությունների ոլորտի ճյուղերի զարգացման համար հարաբերականորեն, իսկ հետագայում նաև բացարձակ կերպով կարող է աշխատողներ ազատել: Մասնավորապես անցած հնգամյակում ՌՍՖՍՀ-ում, էստոնական ՍՍՀ-ում և կատվիական ՍՍՀ-ում արդյունաբերության աշխատողների բաժինը ոչ միայն չավելացավ, այլև նույնիսկ կրճատվեց: Արդյունաբերության մեջ զբաղվածների տեսակարար կշռով նշված հանրապետություններին մոտենում են Ուկրաինական ՍՍՀ-ը, Բելոռուսական ՍՍՀ-ը, Հայկական ՍՍՀ-ը և Լիտվական ՍՍՀ-ը: Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ արդյունաբերության մեջ զբաղվածների թվաքանակի կայունացման միտումը մոտ հեռանկարում կուժեղանա և այստեղ:

Կասկածից վեր է, որ գյուղական զբաղվածության ձևավորման բնույթի վրա զբաղվածության ժողովրդատնտեսական կառուցվածքի փոփոխությունները նշանակալից ազդեցություն կունենան: Իսկ ընդհանուր առմամբ Միության մասշտաբով գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվի նվազման միտումը հետագայում նույնպես կպահպանվի, քանի որ հեռանկարում գյուղա-

⁵ Տե՛ս «Вопросы экономики», 1981, № 9, էջ 57:

⁶ Տե՛ս «Могучая поступь советской экономики», М., 1977, էջ 177:

տնտեսական աշխատանքի արտադրողականության աճը առաջ կանցնի գյուղատնտեսական մթերքների ծավալի աճից:

Հարկ է նկատել, որ գյուղատնտեսությունը չի կարող միշտ մնալ որպես ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերին աշխատուժ մատակարարող աղբյուր: Գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման ու համակենտրոնացման, աշխատատար պրոցեսների մեքենայացման աստիճանի բարձրացմանը զուգընթաց զբաղվածությունը այդ ճյուղում կկայունանա և աստիճանաբար կհիջնի ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերին աշխատուժ մատակարարելու նրա դերը: Դա նաև կներգործի գյուղից քաղաք կատարվող արտահոսքի վրա և նվազագույնի կհասցնի տարերային անկազմակերպ միգրացիան: Սակայն չպետք է մոռանալ, որ առանձին տարիներին մեր երկրում նրկատվել է գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակի աճ և, ընդհակառակը, նրանց թվաքանակի կրճատումը ոչ միշտ է ուղեկցվել կոլտնտեսությունների և սովխոզների նյութատեխնիկական բազայի ամրապնդմամբ և աշխատողների աշխատանքի արտադրողականության աճով: Ուրեմն, ընդհանրապես գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակի ոչ ամեն կրճատում է, որ պետք է համարել գյուղի արտադրողական ուժերի զարգացման օրինաչափ հետևանք:

Գյուղատնտեսության աշխատողների թվաքանակի կրճատումը 1940—1980 թթ. ավելի քան 5 մլն. մարդով ուղեկցվում էր մեկ զբաղվածի աշխատանքի արտադրողականության աճով համարյա չորս անգամ, որի արդյունքք նշված ժամանակամիջոցում գյուղատնտեսական արտադրանքի միջին տարեկան համախառն արտադրության ավելացումն է 2,5 անգամ: Դրա հետ մեկտեղ մեր երկրի գյուղատնտեսության մեջ դեռևս առկա են զբաղվածների թվաքանակի հետագա կրճատման և գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականության բարձրացման էական ռեզերվներ:

Գյուղատնտեսության և ամենից առաջ կոլտնտեսությունների աշխատողների թվաքանակի բացարձակ և հարաբերական կրճատման օրինաչափությունները չի կարելի պատկերացնել որպես աշխատուժի միակողմանի շարժում՝ գյուղից քաղաք և կամ էլ գյուղատնտեսությունից դեպի ժողովրդական տնտեսության այլ ճյուղեր: Գոյություն ունի նաև աշխատուժի հակադարձ շարժում: Բայց գյուղից և գյուղատնտեսությունից դուրս են գալիս ավելի մեծ քանակությամբ աշխատողներ, քան ժամանում են: Գյուղատնտեսությունից աշխատուժի անցանկալի հոսքի պատճառներ են գյուղատնտեսական աշխատանքի բնույթից և պայմաններից, ինչպես նաև վարձատրությունից անբավարարվածությունը, գյուղի ընդհանուր սոցիալ-կուլտուրական և կենցաղային պայմանները և այդ հիման վրա քաղաքային ապրելակերպին նախապատվություն առը և այլն:

Այդ կապակցությամբ զարգացման ներկա փուլում առանձնակի կարևորություն են ստանում ագրարարողյունաբերական ինտեգրացիայի հարցերը: Ինտեգրացիայի զարգացումը առաջին հերթին կոչված է բարձրացնելու արտադրության տնտեսական արդյունավետությունը, նպաստելու քաղաքի և գյուղի միջև եղած կուլտուր-կենցաղային, ինչպես նաև արդյունաբերական և գյուղատնտեսական աշխատանքների միջև եղած տարբերության վերացմանը: Մեր երկրում կուտակված է ագրարարողյունաբերական միավորումների ըս-

⁷ Տե՛ս А. Н. Чернышев, Ю. Е. Шевяхов, Социально-экономическое развитие советского села, М., 1981, էջ 6—7:

տեղծման որոշակի փորձ: Կյանքը ցույց է տալիս, որ դրանց ստեղծումը բացառիկ մեծ նշանակություն ունի գյուղատնտեսության և ընդհանրապես հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման համար: Այն առանձնակի կարևորություն ունի կոլտնտեսություններում և սովխոզներում աշխատանքային ռեսուրսների օգտագործման սեզոնայնությունը մեղմացնելու և այլ ռեսուրսների օգտագործման մակարդակը բարձրացնելու տեսանկյունից: Բավական է միայն նշել, որ եթե 1970 թ. միջտնտեսային ձեռնարկությունների հիմնական ֆոնդերը կազմում են 0,4 մլրդ. ռուբլի, ապա 1978 թ.⁹ 5,5 մլրդ. ռուբլի, այսինքն աճել են համարյա 14 անգամ, այն դեպքում, երբ սովխոզների գյուղատնտեսական նշանակության ֆոնդերն այդ ժամանակաշրջանում ավելացան 2,7 անգամ, իսկ կոլտնտեսություններինը՝ 2,1 անգամ⁸:

Ինտեգրացումը էական դրական ազդեցություն է թողնում նաև տնտեսությունների արտադրանքի թողարկման աճի, ապրանքայնության, շահութաբերության և տնտեսական գործունեության մյուս կարևոր ցուցանիշների վրա:

Մեր հանրապետությունում ագրարարարդյունաբերական համալիրները սկզբնապես ստեղծվել են սովխոզ-գործարանների ձևով: 1968 թ. Հոկտեմբերյանի խորհենու սովխոզը միացվեց նրա տարածքում գտնվող եթերային յուղի գործարանի հետ: Այնուհետև հանրապետության աննդարդյունաբերության միսիստրուկցիայի սիստեմում կազմակերպվեցին ևս 5 սովխոզ-գործարան՝ 4 խաղողագործական-գինեգործական և մեկ պտուղ-բանջարեղենի պահածոների: Մեր հանրապետությունում եղած խաղողագործական, պտղաբուծական և բանջարաբուծական սովխոզների բավականին մեծ ցանցը, ինչպես նաև գինուկոնյակի, պահածոների և վերամշակվող արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկությունները օբյեկտիվ նախադրյալներ են ագրարարարդյունաբերական միավորումների ստեղծումը հետագայում ծավալելու համար: Ճիշտ է, եղած ձեռնարկությունների գործունեության արդյունքները այսօր այնքան էլ մեծ չեն, որը բացատրվում է աշխատանքի պրոցեսների մեթոնայացման ցածր մակարդակով, բազմաճյուղ տնտեսություններ վարելու պատճառով արտադրության համակենտրոնացման հարցերի լուծման դժվարություններով, շուտ փչացող հումքի փոխադրման ու պահպանման, ինչպես նաև պատրաստի արտադրանքի իրացման գործում տեղ գտած թերություններով: Սակայն եղած արդյունքներն այնուամենայնիվ հուսադրող են: Այսպես, Արտենիի սովխոզ-գործարանում գյուղատնտեսական և արդյունաբերական ստորաբաժանումների ինտեգրացման հետևանքով զգալիորեն իջել է աշխատուժի օգտագործման սեզոնայնությունը և մեկ աշխատողի աշխատանքային օրերի թիվը միջին հաշվով հասցվել է շուրջ 270 մարդ-օրի, ինչպես նաև բարձրացել են բոլոր հիմնական տնտեսական ցուցանիշները⁹:

Հետաքրքիր է նշել, որ 227—239 մարդ-օր տարեկան աշխատում են ՌՍՖՍՀ-ի, էստոնիայի, Թուրքմենիայի, Լատվիայի և Ղազախստանի աշխատունակ կոլտնտեսականները, իսկ դա Միության մասշտաբով համարվում է ամենաբարձր ցուցանիշը¹⁰: Մ. Վասիլենկոյի և Ս. Կոլեսնևի հաշվարկումներով, եթե աշխատունակ կոլտնտեսականները տարվա ընթացքում զբաղված լինեին

⁸ Տե՛ս «Экономическая газета», № 3, январь 1980, էջ 10:

⁹ Տե՛ս «Հայաստանի ժող. տնտեսություն», 1975, № 12, էջ 11:

¹⁰ Տե՛ս В. Н. Якимов. Технический прогресс и воспроизводство рабочей силы в колхозах. М., 1976, էջ 127:

270 օր, ապա հանրային տնտեսության մեջ հնարավոր կլինեն լրացուցիչ օգտագործել աշխատանքի այնպիսի քանակություն, որն ավելի քան երկու անգամ կգերազանցեր աշխատանքի ուղղակի ծախսումները ՍՍՀՄ-ի սև մետաղների, նավթի ու նավթամթերքների և ածխի հանույթի արտադրության վրա՝ միասին վեցրած¹¹:

Մեր երկրում ներկայումս գործող ագրոարդյունաբերական ձեռնարկություններն ու միավորումները, հնարավորություն են տալիս աշխատանքային ռեսուրսները ռացիոնալ օգտագործելու հետ մեկտեղ արդյունավետ կերպով լուծելու նաև արտադրանքի իրացման, անասնակերի համար վերամշակվող արդյունաբերության թափոնների օգտագործման, տրանսպորտային ծախսումների իջեցման, ինչպես նաև արտադրության շահութաբերության բարձրացման և աշխատանքի արտադրողականության բարձրացման խնդիրները:

Սաղմնավորվելով գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում, ագրոարդյունաբերական միավորումներն արդեն ապացուցել են իրենց կենսունակությունն ու հեռանկարայնությունը, դարձել զարգացած սոցիալիստական հասարակարգի կարևոր սոցիալ-տնտեսական երևույթ: Դրանց զարգացման հիման վրա տեղի է ունեցել աշխատանքային տեղերի տարածական համակենտրոնացում, որը նյութատեխնիկական նախադրյալներ է ստեղծել նաև տարաբնակեցվածների համակենտրոնացման, կուլտուր-բուսավորական, կենցաղ-սպասարկման, առևտրի և կոմունալ ձեռնարկությունների ցանցի ընդլայնման, այդ գյուղերը բարեկարգ բնակավայրեր դարձնելու համար:

Համընդհանուր զբաղվածության պրոբլեմի կարևորությունն ավելի է մեծանում բնակչության բնական աճի կրճատման կապակցությամբ: Ահա թե ինչու «80-ական թվականների պայմաններում հատուկ նշանակություն է ստանում աշխատանքային ռեսուրսների նկատմամբ հոգատար, խնայողական վերաբերմունքը: Դա բարդ գործ է, որը պահանջում է տնտեսական, տեխնիկական, սոցիալական, դաստիարակչական բնույթի շատ խնդիրների լուծում», — նշվեց ՍՄԿԿ XXVI համագումարում¹², Միատեսակ տեխնիկա-տնտեսական պայմաններում գտնվող ձեռնարկություններում աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը վերջիվերջո դրսևորվում է աշխատանքի արտադրողականության ավելի բարձր աճի մեջ: Գնալով ավելի է աճում աշխատանքի արտադրողականության դերը հատկապես արդյունաբերական արտադրանքի արտադրության ավելացման գործում: Այսպես, ի հաշիվ աշխատանքի արտադրողականության բարձրացման առաջին հնգամյակում ստացվել է արդյունաբերական արտադրանքի աճի 51 տոկոսը, երկրորդ հնգամյակում՝ 79, պատերազմական տարիներին և շրջրորդ հնգամյակում՝ 69, հինգերորդում՝ 68, վեցերորդում՝ 72, յոթերորդում՝ 62, ութերորդում՝ 73, իններորդում՝ 84 և տասներորդ հնգամյակում՝ 75 տոկոսը: Աշխատանքի արտադրողականության աճը միայն X հնգամյակի տարիներին արդյունաբերության մեջ ապահովել է ավելի քան 6 մլն. մարդու աշխատանքի տնտեսում¹³: Կենդանի աշխատանքի այսպիսի տնտեսումը, անկասկած, կնպաստի նյութական արտադրության ճյուղերում աշխատանքային ռեսուրսների լարված հաշվեկշռի թուլացմանը և թույլ

¹¹ Տե՛ս «Коммунист», 1965, № 18, էջ 67:

¹² Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը ՍՄԿԿ XXVI համագումարին, Եր., 1981, էջ 67:

¹³ Տե՛ս СССР в цифрах в 1980 году, М., 1981, էջ 38:

կտա լրացուցիչ աշխատողներ ներգրավել բնակչության սպասարկման ոլորտը: Հասարակական արտադրության մեջ գոյություն ունեն աշխատանքի տրևտեսման ինչպես կենդանի, այնպես էլ առարկայացած աշխատանքի օգտագործման բարելավման ռեզերվներ: Դրանցից աշխատանքային ռեսուրսների զբաղվածության հետ սերտորեն կապված է ֆոնդահատուլյցի ցուցանիշը: Ֆոնդահատուլյցի բարձր մակարդակը թույլ է տալիս արտադրության ընդլայնման համար ավելի մեծ հնարավորություններ ստեղծել և հետևապես ներգրավել լրացուցիչ աշխատանքային ռեսուրսներ:

Մեր հանրապետությունում սոցիալիստական շինարարության տարբեր տարիներին ֆոնդահատուլյցը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով իջել է, իսկ ամբողջությամբ վերցրած տեղի է ունեցել դրա աճ: Ֆոնդահատուլյցի իջեցումը ամենից առաջ պայմանավորված է եղել նոր տնտեսական շրջանների յուրացմամբ, հանքային հանածոների արդյունահանման պայմանների վատացմամբ, ճյուղային կառուցվածքային տեղաշարժերով, բնության պահպանման ուղղությամբ իրականացվող խոշոր կապիտալ ներդրումներով, պահպանման ուղղությամբ իրականացվող խոշոր կապիտալ ներդրումներով, ինչպես նաև արտադրության կազմակերպման գործում տեղի գտած թերություններով:

Ֆոնդահատուլյցի հետագա բարձրացմանը կնպաստի արտադրական կարողությունների օգտագործման բարելավումը, ներհերթափոխային պարապտուրդների կրճատումը, գործող ձեռնարկությունների տեխնիկական վերազինումը և հերթափոխության գործակցի բարձրացումը: Ֆոնդահատուլյցի աճը, ինչպես նաև հերթափոխության գործակցի բարձրացումը թույլ կտան արագացնելու մեր հանրապետության աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման կարևոր սոցիալ-տնտեսական պրոբլեմի լուծումը:

Սոցիալիզմի պայմաններում զբաղվածությունը ստատիկ հակացողություն չէ, ալ իր բուն էությանբ դինամիկ է և փոփոխվում է արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների ներգործության հետևանքով: Զբաղվածությունը չպետք է պատկերացնել նաև որպես հանրորեն օգտակար աշխատանքով զբաղվածների պարզ թվաբանական գումար: Որակական կողմից այն հանդես է գալիս որպես ռացիոնալ զբաղվածություն: Այսպիսով, համընդհանուր և ռացիոնալ զբաղվածությունը աշխատուժի օգտագործման պրոցեսի երկու տարբեր կողմերն են, որտեղ ելակետն անկասկած համընդհանուր զբաղվածությունն է: Բայց ամեն զբաղվածություն էլ չի կարող ռացիոնալ լինել: Դրա համար անհրաժեշտ է վարել աշխատանքային ռեսուրսների օգտագործման գիտականորեն հիմնավորված քաղաքականություն, աշխատանքային ռեսուրսները հնարավորին չափ օգտագործել այն արտադրություններում, որտեղ մարդիկ կարողանան նյութական ու հոգևոր լիակատար բավարարում ստանալ իրենց աշխատանքից, զգալի ավանդ ներդնել երկրի ազգային եկամտի ավելացման գործում: Ընդ որում աշխատանքով բավարարվածությունը հավասարապես վերաբերում է և՛ ֆիզիկական, և՛ մտավոր աշխատանք կատարողներին: Եվ աշխատողը միայն այն դեպքում լիակատար բավարարվածություն կստանա իր աշխատանքից, երբ վերջինս համապատասխանի տվյալ աշխատողի ունեցած մասնագիտական գիտելիքներին, նրա ֆիզիկական ու հոգևոր հնարավորություններին, երբ աշխատածամանակը օգտագործվի ռացիոնալ կերպով, բարձր լինի աշխատատար պրոցեսների մեթենայացման մակարդակը, բարելավվեն և թեթևանան աշխատանքի պայմանները:

Ի դեպ, կոմպլեքսային մեքենայացումը ժողովրդական տնտեսության մեջ աշխատանքային ռեսուրսների լարված հաշվեկշռի մեղմացման գլխավոր ուղին է: Միայն 1976—1978 թթ. ժողովրդական տնտեսության տեխնիկական վերագինման հետևանքով ձեռքի ծանր աշխատանքից ազատվեց 1,3 մլն. մարդ: Երկրի արդյունաբերության մեջ կոմպլեքսայնորեն մեքենայացված և ավտոմատացված արտադրատեղամասերի, արտադրամասերի և արտադրությունների քանակը 1965 թվականի 22,4-ից 1979 թվականին հասավ մինչև 83,5 հազ. միավորի¹⁴: Շատ կարևոր է, որպեսզի հատկապես ակտիվ աշխատանքային տարիքում գտնվողներն աշխատանքային գործունեության հենց սկզբից ղգան իրենց աշխատանքի անհրաժեշտությունը, այն օգուտը, որը նրանք բերում են հասարակությանը և որպեսզի ընտրած մասնագիտությունը համապատասխանի նրանց ընդունակություններին: Միայն այդ դեպքում նրանք բավարարվածություն կստանան իրենց աշխատանքից: Այս գործում երիտասարդությանը ղգալի օգնություն կարող են ցույց տալ մասնագիտական կողմնորոշման կենտրոնները, ինչպես նաև «մասնագիտական կողմնորոշում» առարկայի դասավանդումը հանրակրթական դպրոցներում:

Այսպիսով, համընդհանուր զբաղվածությունը ղարգացած սոցիալիստական հասարակարգի կարևորագույն սոցիալ-տնտեսական նվաճումն է: Դա հնարավոր է միայն սոցիալիստական հասարակարգում, էկոնոմիկայի անընդհատ և անձգնաժամ ղարգացման պայմաններում: Աշխատունակ բնակչության համընդհանուր ղբաղվածության ապահովումը աշխատավորների նյութական և հոգևոր հարաճուն պահանջմունքների ավելի ղրիվ բավարարման անհրաժեշտ պայմանն է: Բնակչության ղբաղվածության աստիճանի բարձրացումը հանրային տնտեսության մեջ կմեծացնի աղգային փկամտի ծավալը, ժողովրդական սպառման մակարղակը, պայմաններ կապահովի XI հնգամյակի սոցիալ-տնտեսական հիմնական խնդրի ղուծման համար:

Г. А. ЗАКАРЯН — Некоторые вопросы занятости трудовых ресурсов в свете решений XXVI съезда КПСС. — В статье рассматриваются некоторые методологические и теоретические вопросы занятости в свете решений XXVI съезда КПСС. Исследуются закономерности распределения и использования трудовых ресурсов в основных сферах общественного производства, влияние агропромышленной интеграции на их рациональное использование, особенности формирования занятости населения в сельской местности.

¹⁴ Տե՛ս «Экономическая газета». № 25, июнь 1980, էջ 15: